Ծուշանիկ Կուրղինյան

Օդում ձգված, շարան, շարան . . .

Օդում ձգված, շարան շարան
Կռունկները կուգան կերթան .
Ես ո՞ւր փնտրեմ գարուն վաթան,
Ո՞ր մեկ ցավս լամ ու սգամ:

Ա՛խ, կռունկներ, խապար չունե՞ք
Իմ վաթան են, իմ քույրերեն .
Ղարիբ սրտիս բարև չունե՞ք
Իմ հարազատ սեգ լեռներեն:

Ես էլ մի օր ճամփա ընկա,
Անցա սարեր, դաշտ ու ծով .
Ղարիբ-ղուրբաթ երկիր եկա՝
Սիրտս լի ծով հույսերով:

Բայց վաթանի ցավը խեղդեց
Երազներս, հույսերս .
Ա՛խ, կռունկներ, սիրտս ավրեց,
Էլ չչորցան աչերս:

Ա՛խ, կռունկներ, հեռու կերթաք,
Ուր որ գարուն՝ դուք այնտեղ .
Ջան կռունկներ, ես ո՞ւր երթամ,

Իմ ցավը շա՛տ, վերքս անդեղ:

1906 թ .